

ՀՈԳՇ. Տ. ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԴ. ԱՂՈՅԵԱՆ
ՀԻՒՐԱԲԱՐ Կ'ԱՅՑԵԼԷ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԸ

Այսու ուրախութեամբ կը հաղորդենք թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, Տիկնանց Սիուրեան Սասնաճիւղերուն, Թեմական Պատգամաւորներուն, յարակից կազմակերպութիւններուն եւ մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, թէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Միաբանութեան երէց անդամներէն՝ Հոգշ. Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան հիւրաբար կ'այցելէ Արեւմտեան Թեմ:

Հայր Սուրբը Լոս Անճելըս ժամանելէն ետք, Ուրբաթ, Յունիս 26ին Առաջնորդարան այցելելով հանդիպում ունեցաւ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէր-տէրեանի հետ եւ եղբայրական սիրալիր ողջոյնները փոխանցեց Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի եւ տեղեկութիւններ տուաւ վանքի հոգեւոր եւ կրթական գործունէութիւններու մասին: Սրբազան Հայրը իր քաջառողջութեան բարեմաղթութիւնները ըրաւ Պատրիարք Սրբազան Հօր եւ նոյնպէս տեղեկութիւններ տուաւ օրէ օր ընդարձակուող Արեւմտեան Թեմի հոգեւոր առաքելութեան եւ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կառուցման եւ օծման մասին:

Սրբազան Հօր հրաւերով, Հայր Սուրբը Կիրակի, Յունիս 28ին Սուրբ Պատարագ մատուցելու քարոզեց Փասսարինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ մէջ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ՅԱԶՈՐԴ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳՆԵՐՈՒ

Դարձեալ Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով, Հայր Սամուէլ Կիրակի, Յուլիս 12ին պիտի Պատարագէ եւ քարոզէ Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ: Ժամերգութիւնը պիտի սկսի առաւօտեան ժամը 8:45ին, իսկ Սուրբ Պատարագը՝ 10:05ին:

Կիրակի, Յուլիս 19ին, Մեր Տիրոջ Այլակերպութեան Տօնին օրը, Հայր Սուրբը պիտի Պատարագէ եւ քարոզէ Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ մէջ: Ժամերգութիւնը պիտի սկսի առաւօտեան ժամը 9:30ին, իսկ Սուրբ Պատարագը՝ 10:00ին:

Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին եկեղեցի, միասնաբար աղօթելու եւ լսելու հիւր հոգեւորականին պատգամը:

ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀՈԳՇ. Տ. ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԴ. ԱՂՈՅԵԱՆԻ

Հայր Սամուէլ Ծնած է Հալէպ, Սուրիա: Իր նախնական կրթութիւնը ստանալէ ետք յաճախած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը: Յուլիս 23ին, 1963, Աբեղայ ձեռնադրուած է Երջանկայիշափակ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ձեռամբ: Վանքէն ներս զանազան պաշտօններ վարելէ ետք Հովուական պաշտօն վարած է Արեւմտեան Թեմէն ներս, ապա որոշ ժամանակ մըն ալ Արեւելեան Թեմին մէջ: 1993ին Վարդապետական Գաւազանի իշխանութիւն ստացած է Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեանի ձեռամբ, իսկ Ծայրագոյն Վարդապետութիւնը ստացած է Երուսաղէմի մէջ 1998ին Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի կողմէ:

Շուրջ տասը տարի առաջ Հայր Սուրբը վերադարձաւ Երուսաղէմ եւ այժմ Տեսուչն է Սուրբ Յարութեան Տաճարի:

Բարի գալուստ եւ ապահով վերադարձ կը մաղթենք իրեն: